

**Հենրիկ Բախչինյան**

**ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂԻ «ՈՂԲՔ Ի ՄԱՀՆ ՋՈՒԱՆՇԻՐԻ ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻՆ»  
ԵՐԿԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

*Բանալի բառեր՝ Դավթակ ֔երթող, Ջվանշիր, Կոմիտաս Աղեցի, շարական, ողբ, պատմաողբ, աշխարհիկ բանաստեղծություն*

Հայ անհատական բանաստեղծությունը ծնունդ է առել Ոսկեդարում որպես եկեղեցական ծիսական երգի՝ կցուրդ-օրհներգի և կցուրդ-ժամերգի գրական բաղադրիչ<sup>1</sup>: 5-րդ դարից մինչև 10-րդ դարը՝ մինչև Գրիգոր Նարեկացու ասպարեզ իջնելը, կենսունակ է եղել բացառապես մեկ բանաստեղծական ժանր՝ **օրհներգը**. այն առավել հայտնի է հետագայում գործածված **շարական** եզրույթով:

Հայտնի է 7-րդ դարում ստեղծված միայն մեկ բանաստեղծական երկ, որ ընդգրկված չի եղել շարական երգերն ամփոփող ժողովածուի՝ Կցուրդարան-Շարակնոցի մեջ: Դա Դավթակ ֔երթողի «Ողբք ի մահն Ջուանշիրի մեծի իշխանին» վերտառությամբ ստեղծագործությունն է:

Մովսես Կաղանկատվացին իր «Աղուանից աշխարհի» Պատմության մեջ բերել է այդ երկի ամբողջական բնագիրը՝ հայտնելով որոշ տեղեկություններ նրա հեղինակի մասին<sup>2</sup>: Ըստ պատմիչի՝ Դավթակ ֔երթողը երկար ժամանակ գործել է Հայոց Արևելյան կողմ կոչված Աղվանից աշխարհի (Արցախ և Ուտիք նահանգներ) Պարտավ ուստանում՝ Ջվանշիր մեծ իշխանի արքունիքում: Վերջինս գահակալել է 637-ից մինչև շուրջ 680 թվականը: Իր տերությունն իմաստությամբ վարած և շինարարական գործունեություն ծավալած բարեպաշտ ու քաջակորով Ջվանշիրը, ինչպես երևում է, իրեն շրջապատել է նաև գիտության ու մշակույթի մարդկանցով: Նա, ըստ Կաղանկատվացու, ունեցել է իր սխրանքները փառաբանող գուսաններ. «Յոզնայորդոր գուսանօք ներբողեալ տարփողականն Ջուանշիր՝ զօրապետն տենչահասակ, որ եւ զանազան իսկ խոհականութեամբ նուաճեր իսկ զամենեսեան ընդ իւրով իշխանութեամբ եւ բոլորովիմբ եղեալ յերկրականիս բարեբաստիկ գերաստացութեամբ խրոխտաբար յօրանայր իմաստակիր քաջութեամբ»:

Դավթակը, անշուշտ, գուսան չի եղել: Նրա **֔երթող** մականունը վկայում է, որ նա կրթվել է Մյունխաց վանքերից մեկում, որտեղից էին ելնում **քերթող**-

<sup>1</sup> Այս կապակցությամբ տե՛ս մեր «Շարականի գրապատմական ուղին (5-7-րդ դարեր)» ուսումնասիրությունը (Երևան, 2012):

<sup>2</sup> Տե՛ս **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 224-230: Ողբից և Պատմությունից մեջբերումները կատարել ենք ըստ այս հրատարակության:

ճարտասաններն ու բանաստեղծները: Սյունիքից էլ նա, ըստ երևույթին, իբրև արդեն համբավավոր քերթող, Ջվանշիր մեծ իշխանի հրավերով եկել էր Աղվանք<sup>3</sup>: Կաղանկատվացու վկայությամբ՝ Դավթակը հմուտ քերթող-ճարտասան է եղել. «ճարտասան ոմն ի մեջ անցեալ, որ տեղեակ էր արհեստական իմաստից, Դաւթակ անուն կոչեցեալ, հնարագիւտական վարժիւք յաջողակ եւ վերձանական քերթութեամբ յառաջադէմ»: Ըստ պատմիչի՝ Դավթակը եղել է նաև բանաստեղծ. գրել է չափաբերված գեղեցիկ ստեղծագործություններ և երգելով արտաբերել դրանք. «Որ եւ յառատաբար ի բանիցն պաճուճանս ճարտարութեամբ նուագէր, քաջապէս հրատարակող լեզու ունելով նման երագագիր գրչի»:

Շուրջ 680 թվականին դավադրաբար սպանվում է մեծ իշխան Ջվանշիրը, և այդ կապակցությամբ Դավթակ Քերթողը հյուսում է նշված ողբական երկը: Այն հյուսված է «ըստ արվաբետաց գլխակարգութեանց», այսինքն՝ հայկական այբուբենը բանակապող ակրոստիքոս է: Նման հյուսվածքով երկերը կոչվել են «Անձինք»: Դա մատնանշում է Կոմիտաս Աղցեցու «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» սկզբնատողով շարականը, որը բանակապ ունեցող առաջին ստեղծագործությունն է մեր քերթության մեջ<sup>4</sup>:

Դավթակի Ողբը գրված է Աղցեցու օրհներգից շուրջ կես դար անց: Այդ ընթացքում նշված օրհներգը բավական սիրվել և տարածվել է հանրության մեջ: Այն եղել է ժամանակի բանաստեղծության ամենաբարձր նմուշն ու չափանիշը, ուստիև Դավթակը հետևել է այդ ստեղծագործությանը: Նա գրել է ոչ միայն «Անձինք»-ի բանակապով, այլև տաղաչափությամբ և այլ հատկանիշներով<sup>5</sup>:

Դեռևս Ոսկեդարում Մովսես Խորենացին ոչ միայն օրհներգ-շարականներ է հեղինակել եկեղեցական խոշոր տոների առթիվ, այլև առանձնակի օրհներգել է որոշ նշանավոր սրբերի, որոնք 5-րդ դարում արդեն տոնելի են եղել հայ եկեղեցում: Ըստ այդմ, նա ստեղծել է մեր առաջին **սրբերգական, սրբախոսական (վարք-վկայաբանական) օրհներգ-շարականները**:

Կոմիտաս Աղցեցու «Անձինք»-ը ևս սրբախոսական (վկայաբանական) շարական է՝ ձևոված Հռիփսիմյան կույսերին: Հետևելով այդ շարականին՝

<sup>3</sup> Որ Ջվանշիրը սերտ կապի մեջ է եղել Սյունյաց աշխարհի հետ, երևում է նույն Կաղանկատվացու Պատմությունից (տե՛ս էջ 220):

<sup>4</sup> Դավթակի Ողբը թեև հյուսված է Աղցեցու երգի բանակապով, սակայն մեզ հայտնի բնագիրը չունի 36 քառատող տներ, ինչպիսին «Անձինք նուիրեալքն» է: Առկա են որոշ խախտումներ, որոնք թերևս գրչական սխալ ընդօրինակությունների արդյունք են:

<sup>5</sup> Երախտավոր շարականագետ Գրիգոր Հակոբյանը նկատել և քննել է Դավթակի Ողբի և Աղցեցու օրհներգի միջև առկա որոշակի աղերսները (տե՛ս **Գ. Հակոբյան**, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV), Երևան, 1980, էջ 122-126): Կարծում ենք, որ Դավթակի Ողբը նաև երգվել է «Անձինք»-ի եղանակով:

Դավթակ Քերթողն իր Ողբը գրել է ոչ միայն նրա արտաքին-ձևային հատկանիշներով, այլև թեմատիկայով՝ որպես **վկայաբանական օրհներգ-շարական**:

Մանուկ Աբեղյանը նկատել է, որ Դավթակի Ողբը հորինված է «հոգևոր երգի ձևով», բայց այն կրոնական, հոգևոր երգ չէ<sup>6</sup>: Ասենք, սակայն, որ էթե Ջվանշիր իշխանը եկեղեցու կողմից սրբացված լիներ՝ որպես հավատի վկա, նահատակ, ապա Դավթակի երգը, ինչպես Աղցեցու «Անձինքը», կհամարվեր **վկայաբանական-սրբախոսական օրհներգ-շարական՝ ողբական հյուսվածքով**: Ընդամին, նկատենք, որ Ողբում Ջվանշիրը պատկերված է նաև վկայաբանական հերոսի որոշ հատկանիշներով, ինչպես.

*Մարգարտաշար էին յեռեալ բանք բերանոյ նորա,  
եւ մաքրափայլ՝ կեանք վարուց նորին...*

*Շնորհք աստուածապաշտութեան  
յորդահոս շարժմամբ ի կայլակաց կողիցն Յիսուսի.  
ծոց ծովասարաս ըզՀոգւոյն առակ եղեալ,  
յանուշից արտահոսէր յախորժացն  
հոտոտելեաց ըզհոտ անմահութեան:*

Բացի այս, Ողբի մեջ նաև իշխում են կրոնական, քրիստոնեական գաղափարաբանությունն ու ոգին, և առկա են աստվածաշնչյան որոշ դրվագների ակնարկումներ: «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի համար գրած «Դավթակ Քերթող» հոդվածում Պողոս Խաչատրյանը գրել է, թե Դավթակի «Ողբում առավել տիրականն, անշուշտ, **քրիստոնեական հայացքն է աշխարհիկ նյութի վերաբերյալ** (ընդգծումը մերն է – Յ. Բ.)»<sup>7</sup>:

Նշենք նաև, որ Դավթակի Ողբը ևս **հայերգության մի ինքնատիպ նմուշ** է այն պարզ պատճառով, որ նրա նյութը Արևելից աշխարհ կոչված Հայոց Աղվանքի հայրենանվեր գահակալի՝ որպես հայության պատվարի խորտակումն է:

Միջնադարյան աշխարհայեցությամբ՝ Ողբի հեղինակը վերահաս աղետի պատճառը համարել է մեղքը և «բանասարկու թշնամի»-սատանայի չարանենգությունը՝ գրելով այսպիսի տողեր.

*Բարկացուցաք զԱրարիչն գործովք մերովք,  
եւ մատնեաց ի կորուստ ըզնախագահ տէրութիւնն:*

*Ի բաց մեկնեցան ի նմանէ պահապանքն.  
եւ օգնութիւնք վերնայինք հրաժարեցան ի նմանէ,  
զի Տէր հեռացաւ յաւուրըն չարի  
եւ եթող ըզնա ի կոխան ժանտից:*

<sup>6</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, Երևան, 1968, էջ 410:

<sup>7</sup> «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 266-267:

*Հարեաց գաղեղն իւր բանասարկու թըշնամին  
եւ սրեաց որպէս ըզսուր ըզնենգիչ սիրոյն.  
չարաչար խոցոտմամբ հասոյց ի վերայ,  
որպէս յազգին Մովաբու ի գիշերի սատակումն:*

Ջվանշիրի մահով նաև փաստվում է երկրային փառքի ու կյանքի սնոտիությունը, ունայնությունը, և այդուհետ մարդիկ

*Փութան մերկանալ զայս փառք անարգեալ.  
քեւ ըզսնոտութիւն նորին նոր ուսեալ,  
թէ չունի երբեք ումեք աստ մընալ:*

Այսպիսով, ուրեմն, **Դավթակի Ողբը գուտ աշխարհիկ երգ չէ**, որքան էլ արծարծվող նյութը իրական-պատմական է, ինչպես որ աշխարհիկ չէ Աղցեցու «Անձինքը»:

Խնդրո առարկա Ողբը պատմական-աշխարհիկ նյութի հիման վրա օրհներգի ժանրով գրված, ողբական բովանդակությամբ, վկայաբանական արտասպաշտամունքային հոգևոր երգ է, ճարտասանական բանաստեղծություն:

Դավթակ Քերթողի երկը ոչ միայն գրված է Աղցեցու «Անձինք»-ի հետևությամբ, այլև որպես ողբական երգ, ըստ մեզ՝ որոշ չափով կրում է աստվածաշնչյան Երեմիա մարգարեի և Քերթողահայր Խորենացու Ողբի, նաև Եղիշեի վկայաբանական Պատմության ազդեցությունը: Հեղինակը թերևս ծանոթ է եղել նաև հին հունական եղերերգ-էլեգիաներին: Նրա ժամանակ, ըստ երևույթին, Մյունխաց դպրոցներում շարունակել են ուսուցանել հունարեն և անտիկ գրականություն: Ինչպես նկատել է Մ. Աբեղյանը, Ողբից երևում է, որ Դավթակը «ծանոթ է հունական արվեստին, գուցե իմացել է նաև հունարեն լեզուն: Այդ դարում դեռ չէին պակասում հունարեն գիտցողները»<sup>8</sup>:

Ներբողելով Ջվանշիրին՝ Դավթակը գրել է.

*Նիրհեր ի մարմին, այլ հոգւոյն արթնութեամբ  
վարէր ըզկառս զԱրէսի ի մէջ աստեղացն,  
քաջութեամբ բերելով զուշիմութեան ծաղիկն:*

Դավթակի Ողբը ճարտասանական ներբողյան-դիֆերամբի և եղերերգողի մի յուրօրինակ գուգակցում է՝ որպես բանաստեղծական ողբ ու ներբող: «Այստեղ, – գրում է Աբեղյանը, – գտնում ենք նյութի բաշխումն, մասերի դասավորություն ու մշակում ըստ ճարտասանական արվեստի: Բավական է միայն այդ համեմատել թեկուզ Ագոնցի «Ճարտասանության» հետ, և կերևա Դավթակ ճարտասանի արվեստը, և կիմացվի, որ իսկապես նա «տեղեակ է արհեստա-

<sup>8</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, էջ 410:

կան իմաստից» և «հնարագիտակ վարժիք յաջողակ»<sup>9</sup>:

Մ. Աբեղյանը նկատել է նաև, որ ինչպես հին հունական դյուցազներգությունների սկզբում բանաստեղծները դիմում էին մուսային, այնպես էլ մեր քերթողը, լինելով քրիստոնյա, դիմում է Սուրբ Հոգուն, որը «արուեստաւոր», ստեղծագործ աշխատանքի մղողն ու ներշնչողն է համարվել.

*Աստուածային Բանին արուեստաւոր Հոգի՛,  
յօրինեա՛ իմաստի ըզտըխրական երգմունս,  
զի սըգալի ձայնիւ անդադար ողբասցուք  
ի վերայ դըժընդակ կորըստեանս մերոյ:*

Ինչպես հատուկ է ողբասացությանը, բանաստեղծը գովերգում է գոհված հերոսի արժանիքները՝ առավել շեշտելու համար կորստի մեծությունը: Տեսանք, որ Դավթակը գովերգել է Զվանշիրի սրբակենցաղ վարքն ու բարեպաշտությունը: Մեծ իշխանը, սակայն, առավելապես եղել է գորեղ քաջամարտիկ և երկրի հզոր ու իմաստուն պաշտպան: Ուստիև Ողբում ավելի շատ ներբողվում են նրա ա՛յդ հատկանիշները: Տեսանք արդեն, որ բանաստեղծն իր հերոսին համեմատել է ռազմի աստված Արեսի հետ: Ողբում առկա են նաև այսպիսի համեմատություն-փոխաբերություններ.

*Էր նըստեալ որպէս զառիծ ի մորուռ,  
եւ լըռեալ՝ ի նըմանէ սարսէին թըշնամիք.  
տեարք տոհմից եւ իշխանք ամենայն  
երկիւղիւ եւ սիրով հնազանդէին ի նմա...*

*Ճըրագ ճըշմարիտ խաղաղութեան էր նա մեր  
եւ նաւապետ ցածուցիչ խոռվութեան ալեաց:*

Երբեմն բանաստեղծը սպանված հերոսին գովերգելիս դիմում է նրան ուղղակիորեն, ինչի շնորհիվ նրա խոսքը դարձել է ավելի կենդանի, մանավանդ որ հեղինակը գովերգին զուգադրել է ավաղելի ներկայի պատկերը, ինչպես.

*Խրոխտ էիր դու ի վերայ ազգաց տիեզերաց  
եւ խորագոյն խոցէիր, որք ըզքեզ արթնացուցէին.  
իսկ արդ դարձաւ արփին յայլ ճանապարհ,  
եւ իսիգախեցին ի վերայ քո որդիքդ ծառայիցդ...*

*Պայծառ քո արփին էր մեզ լոյս անմուտ,  
ո՛հ թէ՛՝ զինչ գիշեր խաւար թըխպահոծ,  
եւ մարմին անլոյս ըզդէմ քո մեզ կալաւ՝  
անփարատ ըստուեր ըզքոյայնօքս արկեալ:*

---

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 410-411:

Ողբ-ներբողներին բնորոշ ձևով, դիմելով որոշ չափազանցությունների, բանաստեղծը պատկերել է նաև հերոսի տիեզերական համբավը.

*Ընդ ամենայն երկիր ել համբաւ նորա,  
 և ի ծագս աշխարհի ծաւալեցաւ անուն նորա.  
 զի ըզհնարիմաց զօրութիւն նորա և ըզհանճարեղ իմաստն  
 հանդիսաւոր հընչմամբ գովեցին տիեզերք:*

*Թագաւորն Յունաց և իշխանն հարաւոյ  
 տենչանօք խընդրէին տեսանել ըզտէրն  
 և յոզնամեծար ողջունիւ ընդունէին  
 և փառօք պըսակեալ՝ պատուէին մեծապէս...*

*Տիրերական ծոցք՝ Լիբանոս լերամբք,  
 յագուրդ առնէին քեւ ի տես միակի...*

Նման տիրակալի կորուստը համագոր է եղել նրա շնորհիվ բարգավաճած երկրի կործանմանը, ինչը ճարտարախոս քերթողը պատկերել է այսպիսի սպավորիչ փոխաբերություններով.

*Գլորեցաւ վէմըն կենդանի և հրգօր,  
 և պարիսպն ամրութեան խորտակեցաւ,  
 աշտարակըն բանաւոր տապալեցաւ,  
 և ցանկըն շինութեան խրամատեալ քակտեցաւ:*

*Դարձաւ ի դառնութիւն խաղաղութիւն մեր,  
 և դրունք հինից տեղասցին ի մեզ,  
 զի մեծաքանչ տէրութիւնըն կործանեցաւ,  
 և հրաշալի պետութեան շիջաւ ճառագայթ:*

Այս անգամ ևս ուղղակիորեն դիմելով գոհված հերոսին՝ ողբագիրն ասել է.

*Վերացաւ մեր թագ, վերացաւ աթոռ,  
 և փառք վայելչութեան ընդ քեզ թաղեցաւ:*

Ողբասացությանը բնորոշ է ողբացողի կոչը համայն աշխարհին՝ իր հետ միասին ողբալու մեծ կորուստը, որ համընդհանուր է: Տվյալ դեպքում թեև կորուստը վերաբերում է Արևելից աշխարհին (Հայոց Աղվանքին), սակայն վիշտը համամարդկային է.

*Բեկումըն մեծ, որ եղեւ Արեւելից աշխարհիս,  
 և աղաղակ կործանման հընչեաց ընդ երկիր.  
 ազգք և ազինք լուիցեն ըզբարբառս իմ  
 և երկրածինքս ամենայն ողբացեն ընդ իս:*

Հետևաբար բանաստեղծը թե՛ արտահայտել է իր անձնական ողբը և թե՛ պատկերել համընդհանուր վիշտը: Նման մարդու կորուստը, հիրավի, չափազանց ցավալի է եղել զգայուն բանաստեղծի համար, և Ողբի մեջ արտահայտված անձնական շեշտը բավական ազդեցիկ է դարձնում նրա խոսքը.

*Ողբք են ինձ արդէն ոչ հաւերժահարսիցն  
եւ տարմի ջայլենանց,  
այլ գորդոցն համբարուց կոծ կըսկըծագին  
առ գատեալ մնացելոցդ քաղաք մենացեալ...*

*Ջեռնում յիրաւի, տագնապեալ այրիւմ,  
մինչ զաթոռ քո բարձրագահ ունայն քեւ հայիմ...*

*Ռահ մխիթարութեան զընացք քո փակեաց,  
ուստի վըշտագին վիրօք աչք իմ  
ծորեն յար զաղբիւրս արտասուաց:*

Բերված հատվածը կարելի է համարել հայ միջնադարյան բանաստեղծության մեջ **անձնական մոտիվի** արծարծման վաղագույն նմուշը:

Ջվանշիրի մահը դառնագին ողբում են նաև նրա մերձավորներն ու հեռավորները, անգամ այլ երկրների թագավորները.

*Սիրով քո այրին սիրելիք քոյին  
եւ սէր քո անմոռաց ի մըտի ունին...*

*Ըամք թագաւորաց քեւ սուգ ըզգեցան,  
առագաստք հարսանց խիստ փոշոտեցան:*

*Յաւին եւ ցաւին եւ դառն արտասուեն,  
իւծեալ տառապին,  
զերթ ձագամեռ հաւ յանապատ նըստին:*

Այս մեծ ողբերգության պատճառ են դարձել «բանսարկու թշնամի» սատանայից մոլորության մեջ ընկած չարահոգի մարդիկ: Նրանք Տերունական Սուրբ Խաչի օրը (Խաչվերացին)

*զանգիւտ կորըստեան փորեցին խորխորատ,  
զի ըզհովիւրն բարի ընկըուզեցին ի նա.  
հոգի մոլորութեան շընչեաց ի նոսա  
եւ ի նանիր թաքուցին գորոգայթըն մահու:*

Գործված չարիքը ողբերգուն համարում է վերահաս անեծք («Եկին հասին ի վերայ մեր անեծք»), և ինքն էլ, ի պատասխան, անեծքների մի երկար շարան է տեղում մեծ իշխանին պատուհասած դավադիր մարդասպանի գլխին: Բերենք

այդ շարքը, որ նգովական խոսքի առաջին նմուշն է մեր քերթության մեջ, այն էլ շարադրված ճարտասանական-բանաստեղծական վարպետությամբ.

*Ծընունդ չար, որ մեղաւ նըմա  
 Եւ որդի անօրէնութեան, որ չարչարեաց ըզնա,  
 անիծիւք պարուրեալ գընասցէ ընդ երկիր  
 Եւ Կայէնի երերմամբն վարանեալ շըրջեսցի:*

*Կայեսցին շաւիղք փախըստեան նորա,  
 Եւ թըռչունք երկնից ճախրեսցին ի վերայ նորա,  
 ազոաւք ձորոց սըլասցին ի նա,  
 Եւ գագանք վայրի սպասեսցեն նըմա:*

*Հուրն Հերովդի առաքեսցի նըմա,  
 Եւ ծընցին ի նըմա որդունք Եւ մունք,  
 աղէկէզ տոչորմունք բորբոքեալ ի նըմա՝  
 կերիցեն առժամայն ըզտիրասպան մարմին նորա:*

*Ձեռն, որ ձրգեցաւ ի սպանանել ըզտէրն,  
 Եւ ոտք, որ կոխեսցին ըզհրաշագեղ պատկերն,  
 ուրկածին ախտին Եւ տացմամբ գօսացեալ՝  
 յարեսցին ի նա ցեցք չարակեղ խոցոտմամբ:*

*Ղօղեալ հանգիցէ ընդ հովանեաւ դըժընկի,  
 Եւ կորինք իժից մեղիցեն նըմա,  
 թոյնք քարբից հեղցին ըզնովաւ  
 Եւ սաստկագոյն ուռուցմամբ հերձցեն ըզնա:*

Անեծքի մոտիվը Դավթակի Ողբից անցել է նաև մեր միջնադարյան պատմաողբերին<sup>10</sup>:

Չբավարարվելով վերը բերված նգովաշարով՝ բանաստեղծն այնուհետև գրում է նաև հետևյալ տողը, որ ազդեցիկ է իր հանգիստությամբ.

*Չարեօք չորասցի, որ գքեզ չարչարեաց:*

Առհասարակ, Դավթակի երգը հագեցած է պատկերավորման և արտահայտչական միջոցներով, հատկապես համեմատություններով ու փոխաբերություններով, որոնց շնորհիվ բավական ազդեցիկ են դառնում նրա ողբանքը, ներբողն ու անեծքը: Իսկական բանաստեղծական գյուտեր են հետևյալ տողերը.

<sup>10</sup> Տե՛ս Պ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր, Երևան, 1969, էջ 13:



*Ո՛հ, թե՛ խունկ անուշութեան  
բուրեալ լինեաք քո գերեզմանին...*

*Քաղցր է գայլս ասել եւս եւ միշտ հեծել,  
բայց՝ քաղցրագոյն եւս ընդ քեզ մեռանել:*

Վերջին երկտողը ներկայացնում է այս խորագրու ստեղծագործության բավական տպավորիչ ու նրան վայել ավարտը:

Ամփոփելով ասենք, որ **Դավթակ Քերթողի «Ողբք ի մահն Ջուանշիրի մեծի իշխանին»** ստեղծագործությունը գրված է վկայաբանական-սրբախոսական օրհներգ-շարականի ժանրով: Խարսխված լինելով աշխարհիկ-պատմական նյութի վրա՝ այդ մեծարժեք ճարտասանական-բանաստեղծական երկն իր հերթին նպաստել է աշխարհիկ բանաստեղծության կայացմանը և պատմական բանքի տարատեսակը հանդիսացող պատմաողբի ի հայտ գալուն:

Գենրիկ Բախչինյան

**ЖАНРОВЫЙ ОБЛИК ПРОИЗВЕДЕНИЯ ДАВТАКА КЕРТОХА  
«ПЛАЧ НА СМЕРТЬ ВЕЛИКОГО КНЯЗЯ ДЖЕВАНШИРА»****Резюме**

*Ключевые слова:* Давтак Кертох, Джваншир, Комитас Ахцеци, шаракан, плач, исторический плач, светская поэзия

В армянской литературе 5-10 веков, до появления великого Григора Нарекаци, доминировал исключительно один поэтический жанр – церковная песня-шаракан. Известно созданное в 7-ом веке лишь одно поэтическое произведение, которое не был включен в церковном сборнике Шаракноц. Это «Плач на смерть великого князя Джеваншира», автором которого является поэт-риторик Давтак Кертох.

Долгое время Давтак Кертох действовал в Армянской Албании (Ахванк, Северный Арцах), в дворе великого князя Джеваншира. По поводу гибели этого праведного и благодетельного князя Давтак создал плач в стихах – весьма ценное художественное произведение. Оно написано под влиянием знаменитого мартирологического шаракана католикаса Комитаса Ахцеци, посвященный святой Рипсимэ и своих сомучениц. Этот шаракан был создан почти за полувек до создания плача Давтака и был очень любим и популярен в обществе того времени. Давтак Кертох, следуя поэтике шаракана Ахцеци, свое произведение написал в виде акростиха по буквам армянского алфавита и соответственно строил 36 строф. Давтак усвоил также другие элементы поэтики шаракана Ахцеци.

В Плаче Давтака погибший князь Джеваншир представлен всеми чертами мученического героя, и будь он признан армянской Церковью как святым, то это произведение, по подобию шаракана Ахцеци, также считалось бы церковной песней – шараканом.

Как показывает историко-сравнительный и теоретический анализ, Плач Давтака Кертоха является своеобразным слиянием мартирологического шаракана, риторического дифирамба и элегии. В свою очередь это своеобразное произведение раннего армянского средневековья имело влияние на формированию светской поэзии и на возникновению жанра исторического плача.

Henrik Bakhchinyan

## GENRE APPEARANCE OF DAVTAK KERTOĞH'S "A LAMENT FOR THE DEATH OF THE GRAND PRINCE JEVANSHIR"

### Summary

**Key words:** *Davtak Kertogh, Jvanshir, Komitas Aghtsetsi, sharakan, lament, historical lament, secular poetry*

In Armenian literature of the 5-10<sup>th</sup> centuries, before the appearance of the great Grigor Narekatsi, only one poetic genre – the sharakan church song, dominated. Only one poetic work from the 7<sup>th</sup> century is known, which was not included in Sharaknots church collection. This is "A Lament for the Death of the Grand Prince Jevanshir," authored by poet and rhetor Davtak Kertogh.

For a long time Davtak Kertogh worked in Armenian Albania (Aghvank, Northern Artsakh), in the courtyard of the Grand Prince Jevanshir. On the occasion of this righteous and beneficent prince's death, Davtak created a lament in verse – a very valuable piece of art. It was written under the influence of the famous martyrological sharakan by Catholicos Komitas Akhtsetsi dedicated to the saint Hripsime and her fellow martyrs. This sharakan was written almost half a century before the creation of the Davtak's Lament and was very loved and popular in the society of that time. Davtak Kertogh, following the poetics of Akhtetsi's sharakan, wrote his work in the form of an acrostic in the letters of the Armenian alphabet and accordingly built in 36 stanzas. Davtak also learned other elements of the poetics of Akhtetsi's sharakan.

In Davtak's Lament, the deceased prince Jevanshir is represented by all the traits of a martyr hero, and if he were recognized by the Armenian Church as a saint, this work, as it was in the case of Akhtetsi's sharakan, would also be considered a church song – a sharakan.

As historical, comparative and theoretical analysis show, the Davtak Kertogh's Lament is a kind of merger of the martyrological sharakan, rhetorical dithyramb and elegy. In turn, this peculiar work of the early Armenian Middle Ages had an influence on the formation of secular poetry and on the emergence of the historical lament genre.